Արձանագրություն N 3

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2022/6>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 30 դեկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարտիրոսյան
Հանձնաժողովի անդամ՝ Ա. Առուշանյան

Քարտուղար՝ Լ. Ադամյան

Բացակայում էր
Հանձնաժողովի անդամ՝ Ռ. Խաչատրյան

1. <<**ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2022/6**>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2021թ. դեկտեմբերի 30-ին, ժամը 14:30-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

3. Էեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է 2022 թ. հունվարի 3-ին, ժամը 14:30-ին:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2022թ. հունվարի 4-ին, ժամը 11:00:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2022/6>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան 4 հունվարի 2022թ.
Ժամը՝ 11:00

5. << **ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2022/6**>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2022թ. հունվարի 3-ին, ժամը՝ 14:30-ին:

6. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N	**Մասնակցի անվանումը**	**Տվյալները**
1	<<Ստեպ լոջիկ>> ՍՊԸ	ք. Երևան, Արգիշտի 7, հեռ. (099) 08 77 08

7. Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի գնման հայտով հաստատված գինը	Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)*	
					<<Ստեպ լոջիկ>> ՍՊԸ	
					Գնի առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	Հիմնական համակարգչի (մեյնֆրեյմ) օպերացիոն համակարգերի ծրագրային փաթեթներ (ցանցային կառավարման և անվտանգության ծրագրային ապահովում)	դրամ	1	4300000	3222450	3866940

***Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը**

8. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում <<Ստեպ լոջիկ>> ՍՊԸ-ն՝ 1-ին չափաբաժնի մասով:

9. Հայտի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ուղարկված հայտը Համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

10. Ներկայացված հայտի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<**ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2022/6**>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ճանաչել ընտրված մասնակից <<Ստեպ լոջիկ>> ՍՊԸ-ին:

11. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ կիրառելի չէ:

12. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Ա. Առուշանյան

Քարտուղար՝ _____ Լ. Ադամյան